# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » մարտի 2026թ. N ՄՈ/153-Ա

ք. Արմավիր

## «ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2026 թվականի մարտի 18–ի ՄՈ/148-Ա և ՄՈ/150-Ա որոշումները՝ «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին (Թ. Մկրտչյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Լաուրա Ավագյանին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովի նախագահին (Թ. Մկրտչյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը աշխատանքներն իրականացնելու համար ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության**
**Արմավիրի մարզպետ**

**2026 թվականի [illegible] 18-ի**
**N ՄՈ/153 -Ա որոշման**

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Թ.Մկրտչյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

**Անդամներ՝**

Ն. Երվանդյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ

Ջ. Եղոյան — Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ

**Հանձնող՝**

Ռ. Պետրոսյան — «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականության նախկին կատարող

**Ընդունող՝**

Ա. Երիցյան — «Արևադաշտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօ

Восстановимая подпись

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**